

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Արագածոտնի մարզային հանձնաժողովի նիստի

Ք. Աշտարակ

25.07.2014թ. ժ.10⁰⁰

Նիստը նախագահում էր ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Արագածոտնի մարզային հանձնաժողովի նախագահ պարոն Սարգիս Սահակյանը:

Մասնակցում էին ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալը, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Արագածոտնի մարզային հանձնաժողովի անդամները, Արագածոտնի մարզի բոլոր համայնքների ղեկավարները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները, ԶԼՄ-ների ներկայացուցիչները:

Ներկա էին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահի տեղակալ պարոն Ստեփան Մնացականյանը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի անդամ, գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները համակարգող պարոն Գագիկ Անանյանը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ստորաբաժանումների ու գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) վարչության աշխատակիցներ Վարդան Գևորգյանը, Արսեն Ավագյանը, Գոհար Նշանյանը և Արմեն Շահինյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նպատակը և կարևորությունը:
2. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման աշխատանքների ընթացքը:
3. Մարզային հանձնաժողովի և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին.

ա) հաշվարարների թեկնածուների ներկայացում

բ) գյուղապետարանների, դպրոցների, մանկապարտեզների կամ այլ հանրային բնույթի շենքերում ժամանակավոր՝ **մինչև 3** (հրահանգչական տեղամասերի) և **4** (հաշվառման տեղամասերի) ամիս տևողությամբ սենյակների տրամադրում:

4. Այլ հարցեր (հարց ու պատասխան):

Բացման խոսքով հանդես եկավ նիստը նախագահող, ՀՀ Արագածոտնի մարզպետ **պարոն Սարգիս Սահակյանը:**

Նա ողջունեց նիստի մասնակիցներին և առաջարկեց աշխատանքը սկսել համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ներկայացված օրակարգի: Օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնելու համար նա խոսքը տվեց ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանին:

Ս.Մնացականյանը շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին, անդամներին, համայնքների ղեկավարներին և մյուս մասնակիցներին մարզային հանձնաժողովի նիստին մասնակցության համար ու առաջարկեց սկսել աշխատանքը համաձայն օրակարգի:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը (համակարգչային ներկայացմամբ 16 պատկեր համառոտագիրը, որը կցվում է) ըստ հերթականության ներկայացվեցին պարոն Ս. Մնացականյանի կողմից:

Ս.Մնացականյանի կողմից հատուկ առանձնացվեցին այն հիմնահարցերը, որոնք առաջնահերթ են ԳՀՀ նախապատրաստական աշխատանքների իրականացման շրջանակում:

Այնուհետև Ս. Սահակյանի և Ս. Մնացականյանի կողմից առաջարկվեց անկաշկանդ քննարկել հետաքրքրող ցանկացած հարց: Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքների ղեկավարները և այլ մասնակիցներ:

Հնչեցված հարցերը վերաբերում էին գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին, համայնքներում տնտեսություններին և համայնքին պատկանող հողերի փաստացի չափերի և համայնքների հողային հաշվեկշռի (կադաստրային չափագրումների) համապատասխան ցուցանիշների միջև առկա տարբերությանը (անհամապատասխանությանը), տնտեսության գլխավորի մահից հետո հողի սեփականության իրավունքի իրավական տեսանկյունով ժառանգության չձևակերպման հարցին, համատարած հաշվառման իրականացման ժամկետների սղությանը և մի շարք այլ խնդիրներին:

Ապարանի քաղաքապետը և որոշ համայնքների ղեկավարներ հարց բարձրացրեցին համայնքային աշխատողներին ԳՀՀ ժամանակավոր աշխատանքներում ներգրավելու մասին, և որպես խնդրի լուծում իրենց կողմից առաջարկվեց, որ համայնքային աշխատողներին ՀՀ համատարած հաշվառումների աշխատանքներում ժամանակավոր ներգրավելու նպատակով ՀՀ կառավարությունն ընդունի համապատասխան որոշում:

Համայնքների ղեկավարների կողմից բարձրացված հարցերին Ս. Մնացականյանը և Գ. Անանյանը տվեցին սպառիչ պատասխաններ հարցերի լուծման իրավական շրջանակներում:

Պարոն Ս. Սահակյանը իր և հանձնաժողովի մյուս անդամների անունից շնորհակալություն հայտնեց ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանին հանգամանալից զեկույցի, բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տալու համար և նշեց, որ ՀՀ Արագածոտնի մարզում ս/թ հոկտեմբերի 11-ից 31-ը գյուղատնտեսական համատարած հաշվառումը կանցկացվի բարձր կազմակերպվածությամբ: